# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«15» հունվարի 2026թ. N 06-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N 111-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 26-ի N INS128-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 18-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 111-Ա հրամանի հավելվածը լրացնել 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 2026 թվականի Հունվարի 26-29 | 16:30 - 21:30 | «Խելացի համակարգերը քաղաքային և արդյունաբերական միջավայրի զարգացման համար » | Կարեն Երզնկանյան՝ SmartCity հասարակական կազմակերպության նախագահ, IoT լաբորատորիայի ղեկավար, ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի դասախոս, Ինստրուկտահիում» ՍՊԸ դասախոս: Նարեկ Մարգարյան՝ ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, «Օ-ԷՄ-Դի» ՍՊԸ տեխնիկական աջակցող, «Ինստրուկտահիում» ՍՊԸ դասախոս, Բիլյան Ծովինար՝ | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 10 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-30, 34 մասնագիտություններ | 40.000 դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Ինստրուկտահում» ՍՊԸ Անձանց սերտիֆիկացման մարմնի ղեկավար, կառավարման համակագերի սերտիֆիկացման մարմնի ղեկավար, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դասախոս: | | | | |

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

1/15/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ